ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

< 11 > դեկտեմբերի 2015թ. N 237-Ա

ՎԱԼԵՐԻԿ ՖՐՈՒՆԶԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95 հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 71-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Գյուղական բնակավայրերում գործող առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպելու մասին» N 41-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գանձակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 10-ի N 4 որոշումը և նույն հանձնաժողովի եզրակացությունն ու Վալերիկ Ֆրուզի Մինասյանի դիմումը՝

կարգադրում եմ՝

1. 2015 թվականի դեկտեմբերի 11-ից Վալերիկ Ֆրուզի Մինասյանին՝ 3 տարի ժամկետով, նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գանձակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ